ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 247

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասարի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի
(ծածկագիրը՝ 3.1-10)

ա) Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
գ)կազմակերպում և իրականացնում է համայնքում աղբահանության պայմանագրերի կնքման գործընթացը.
դ)համակարգում է համայնքում իրականացվող աղբահանության գործընթացը.
ե) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ շրջայցեր է կատարում համայնքի բնակավայրեր և արդյունքների մասին տեղեկացնում աշխատակազմի քարտուղարին.
զ)միջոցներ է ձեռնարկում համայնքում աղբը աղբավայրերից դուրս թափելը կանխարգելելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում իրականացնելով նաև բացատրական աշխատանքներ.
է) իրականացնում է կոմունալ տնտեսության բնագավառի բոլոր աշխատանքները և վարում է այդ բնագավառի ամբողջ փաստաթղթաշրջանառությունը :
ը)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված սոցիալական երաշխիքներ և կրում է իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի առնվազն միջնակարգ կրթություն.
-ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ՀՀ <<Սահմանադրության>>, 'Տեղական ինքնակառավարման մասին', <<Աբահանության և սանիտարական մաքրման մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Համայնքային թափոնների կառավարման մասին>>, <<Վարչական իրավախաղտումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներին, և անհրաժեշտ այլ իրավական ակտերին.
-ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
-իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում տիրապետում է (ազատ կարդում և կարող է բացատրվել) օտար լեզվի (լեզուների):

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի հուլիսի 27-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք դիմումներ կարող են ներկայացնել e-request.am էլեկտրոնային հասցեին: Տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հեռ. 011562776:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն